https://doi.org/10.46991/hc.2025.si1.197

# Materials Characteristic of the Bronze and Iron Periods, discovered by R. Torosyan from Excavations of Early Agricultural Sites in the Ararat Valley

**Anzhela Tadevosyan**
https://orcid.org/0009-0009-0985-3353
Historical-Ethnographic Museum of Vagharshapat
anzhela.tadevosyan@gmail.com

**Keywords** - R. Torosyan, Ararat Valley, Early Agricultural settlements, Echmiadzin, Early Bronze, Middle Bronze, Teghut, Voskehat.

*Armenian archaeologist Rafik Torosyan is known to the scientific community mainly for his works devoted to the formation and development of the Early Agricultural society in Armenia. In fact, the sphere of his scientific interests was much wider, covering practically all periods available for archeological research. R. Rorosyan's excavations of Early Agricultural settlements of the Ararat Valley in 1960-1970. allowed to interpret the most ancient culture of the region in a new view, to reveal the peculiarities and characteristic features of the Neolithic - Chalcolithic culture. At the same time, materials from the upper horizons, characteristic of the Bronze and Iron periods (with the exception of materials from burials in the territory of the open biofilter of Echmiadzin) are rarely mentioned in the scientific literature.*

*Although materials from the Early Bronze Age are scarce, their wide representation suggests a fairly dense settlement of this territory. During this period, the study area was in the sphere of attraction of Mohrablur.*

*Materials characteristic of the Middle Bronze Age are presented both in burials and settlements. Funerary monuments are characteristic of the entire Middle Bronze Age, while the territory of settlements is re-populated starting from the beginning of the 2-nd millennium BC. and are characterized by painted ceramics.*

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 197-208.

Received: 20.11.2024

Revised: 13.02.2025

Accepted: 26.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

*The development of the territory continues in the Late Bronze and Early Iron periods, when this territory was part of the Metsamor agglomeration.*

## Բրոնզ-երկաթեդարյան հուշարձանների հետազոտությունը Արարատյան դաշտի վաղերկրագործական բնակատեղիներում ըստ Ռ. Թորոսյանի պեղումների

**Անժելա Թադևոսյան**
**Վաղարշապատի պատմազգագրական թանգարան**

**Հիմնաբառեր** - Ռ. Թորոսյան, Արարատյան դաշտ, վաղ երկրագործական բնակավայրեր, Էջմիածին, վաղ բրոնզ, միջին բրոնզ, Թեղուտ, Ոսկեհատ:

*Անվանի հայ հնագետ Ռաֆիկ Թորոսյանը գիտական լայն հանրությանը ծանոթ է հիմնականում Հայաստանում վաղ երկրագործական հասարակության կազմավորմանն ու զարգացմանը նվիրված աշխատություններով: Իրականում նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը անհամեմատ ավելի ընդարձակ էր՝ ընդգրկելով հնագիտական ուսումնասիրության ենթակա բոլոր ժամանակաշրջանները: 1960-70 թթ. Ռ. Թորոսյանի պեղումներն Արարատյան դաշտի վաղ երկրագործական բնակավայրերում թույլ տվեցին նորովի մեկնաբանել տարածաշրջանի հնագույն մշակույթը, վեր հանել նեոլիթ-էնեոլիթյան մշակույթի առանձնահատկությունները և հատկանշական գծերը: Միևնույն ժամանակ, պեղումների ընթացքում հուշարձանների վերին հորիզոններից հայտնաբերված բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանին բնորոշ նյութը (բացառությամբ Էջմիածնի բաց բիոֆիլտրի տարածքի դամբարաններից հայտնաբերված նյութերից) հազվադեպ է արծարծվում մասնագիտական գրականության մեջ:*

*Վաղ բրոնզի դարաշրջանի նյութերը թեպետ համեմատաբար սակավ են, սակայն դրանց սփռվածությունը թույլ է տալիս ենթադրել տարածքի բավականաչափ խիտ բնակեցման մասին: Տվյալ ժամանակաշրջանում ուսումնասիրվող տարածքը գտնվում էր Մոխրաբլուրի ձգողականության տիրույթում:*

*Միջին բրոնզին բնորոշ նյութերը ներկայացված են ինչպես դամբարանային համալիրներում, այնպես էլ բնակատեղիներում: Միջին բրոնզի դարաշրջանի դամբարանային համալիրները բնորոշ են ողջ շրջափուլին, այն ժամանակ երբ բնակատեղիները վերստին բնակեցվում են սկսած Ք.ա. II հազ. սկզբից և բնորոշվում են*

*գունազարդ խեցեղենով: Տարածաշրջանի յուրացումը շարունակվում է նաև ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերում, երբ էջմիածնի տարածաշրջանը մտնում էր ընդգրկված էր մեծամորյան ագլոմերացիայի կազմում:*

## Материалы, характерные для периодов бронзы и железа, обнаруженные Р. Торосяном из раскопок раннеземледельческих памятников Араратской долины

**Анжела Тадевосян**
**Эчмиадзинский историко-этнографический музей**

**Ключевые слова** - Р. Торосян, Араратская долина, раннеземледельческие поселения, Эчмиадзин, ранняя бронза, средняя бронза, Техут, Воскеат.

*Выдающийся армянский археолог более известен научной общественности, посвященными формированию и развитию раннеземледельческих культур в Армении. В действительности, сфера его научных интересов была гораздо шире, охватывая практически все периоды, доступные для археологического исследования. Раскопки Р. Торосяна раннеземледельческих поселений Араратской долины в 1960-1970 гг. позволили по - новому интерпретировать древнейшую культуру региона, выявить особенности и характерные черты неолит - энеолитической культуры. В то же время материалы из верхних горизонтов, характерные для периодов бронзы и железа (за исключением материалов из погребений на территории открытого биофильтра Эчмиадзина) редко упоминаются в научной литературе.*

*Материалы периода ранней бронзы хотя и малочислены, однако их широкое представленность позволяет предположить довольно плотное заселение данной территории. В данный период изучаемая территория находилась в сфере притяжения Мохраблура.*

*Материалы, характерные для периода средней бронзы представлены как в погребениях, так и в поселениях. Погребальные памятники характерны для всего периода средней бронзы, в то время как территория поселений повторно заселяется начиная с начала II тыс. до н. э. и характеризуются расписной керамикой.*

*Освоение территории продолжается и в периодах поздней бронзы и раннего железа, когда данная территория являлась частью мецаморской агломерации.*

*  *  *

***Մուտք:*** Անվանի հայ հնագետ Ռաֆիկ Թորոսյանը գիտական լայն հանրությանը ծանոթ է հիմնականում Հայաստանում վաղ երկրագործական հասարակության կազմավորմանն ու զարգացմանը նվիրված աշխատություններով [Թորոսյան, 1976]: Իրականում նրա գիտական հետաքրքրությունների շրջանակն անհամեմատ ավելի ընդարձակ էր ընդգրկելով հնագիտական ուսումնասիրության ենթակա բոլոր ժամանակաշրջանները: Ցավոք հեղինակի կյանքի օրոք նրա աշխատանքների միայն մի փոքր մասն է հրատարակվել: Սակայն նույնիսկ հրատարակված (այդ թվում նաև հետմահու) [Թորոսյան և այլք 2002] նյութերը, ինչպես նաև Ռ. Թորոսյանի աշխատանքների մասին հիշատակումներն այլ հեղինակների աշխատություններում [Кушнарева, Марковин 1994, 101, 116; Եսայան, 1972 70-73] ակներևաբար մատնանշում են հեղինակի գիտական հետաքրքրությունների լայն շրջանակը, բազմահմտություն, հնագիտական նյութին և պատմական աղբյուրներին տիրապետելը:

1960-70 թթ. Ռ. Թորոսյանի պեղումներն Արարատյան դաշտի վաղ երկրագործական բնակավայրերում թույլ տվեցին նորովի մեկնաբանել տարածաշրջանի հնագույն մշակույթը, վեր հանել նեոլիթ-էնեոլիթյան մշակույթի առանձնահատկությունները և հատկանշական գծերը: Միևնույն ժամանակ, պեղումների ընթացքում հուշարձանների վերին հորիզոններից հայտնաբերված բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանին բնորոշ նյութը (բացառությամբ Էջմիածնի բաց բիոֆիլտրի տարածքի դամբարաններից հայտնաբերված իրերից) հազվադեպ է արծարծվում մասնագիտական գրականության մեջ:

Ավելին, ի սկզբանե որոշ հուշարձանների ավերված լինելը հաճախ թույլ չի տալիս որոշել հուշարձանի բնույթը:

***Բրոնզ-երկաթեդարյան համալիրները վաղ երկրագործական բնակավայրերի տարածքում:*** *Վաղ բրոնզին* (Ք.ա. 32-24-րդ. դդ.) *բնորոշ նյութերի հավաստումը վաղ երկրագործական բնակատեղիներում:* Այս առումով նախ և առաջ հարկ է հիշատակել Թեղուտի հուշարձանախումբը. վաղ երկրագործական բնակավայրը, նույն համատեքստում գտնվող Թեղուտի և բաց բիոֆիլտրի դամբարանադաշտերը, հելենիստական ժամանակաշրջանի բնակատեղին: Տեղանքի Թեղուտ անվանումն արհեստածին է և կապված է այստեղ գոյություն ունեցող թեղենիների պուրակի հետ: Ռ. Թորոսյանի օրագրերում երբեմն օգտագործվում են «Տնկարանի տարածք», «Անանուն Բլուր», «Թեղուտ», «Բաց բիոֆիլտր» անվանումները:

Թեղուտի տարածքում վաղ բրոնզի նյութեր հայտնաբերվել են I տեղամասի N 2 կացարանում [Թորոսյան, 1967, 1, օրագրային գրառում 01. 08. 1967, Էջմիածնի

պատմազգագրական թանգարան (այսուհետև՝ ԷՊԱԹ 2218, 2077, 2077/1)], ինչպես նաև հարևան բաց բիոֆիլտրի տարածքում [ԷՊԱԹ 1-3/1]: Ցավոք, տեղեկությունների սակավության պատճառով բաց է մնում վաղ բրոնզեդարյան համալիրի բնորոշման խնդիրը: Էնեոլիթյան բնակավայրի և բաց բիոֆիլտրի տարածքից հայտնաբերված փոքրաթիվ բեկորային նյութերը բավարար չեն եզրակացություն անելու համար[1]: Վաղ բրոնզին բնորոշ առանձին նյութեր հայտնաբերված են նաև Ծաղկունքի բնակավայրից:

Վաղ բրոնզին բնորոշ խեցեղեն հայտնաբերվել է Զվարթնոցի տարածքից [Խանզադյան, 1967, 12]: Քաղաքի տարածքում վաղ բրոնզին բնորոշ նյութ հայտնաբերված է նաև մի շարք այլ հատվածներում: Մասնավորապես այդպիսի անոթի բեկոր գտնվել է Սբ. Հռիփսիմե վանքի հյուսիսային պատից դուրս: Բեկորն իրենից ներկայացնում է սև փայլեցված արտաքին և թաց հարդարված ներքին մակերեսով անոթ, բարձր, քիչ դուրս թեքված շուրթով, մասիվ երկթեք իրանով, որի վրա փոսիկ է [Ռ. Թորոսյան 1976-1982 թթ. օրագիր, 1979 թ. օրագրային գրառումներ, 51]: Վաղ բրոնզին բնորոշ խեցեղեն հայտնաբերված է նաև Մայր Տաճարի տարածքում. այգում և հին վանատան տարածքում [ԷՊԱԹ 2219-2224, 5510/1]: Քարե մուրճ, որն իր կերտվածքով հիշեցնում է էնեոլիթ-վաղ բրոնզեդարյան օրինակները, գտնվել է Էջմիածնի Ռ. Պատկանյան փողոցից [ԷՊԱԹ 5612/1]: Վաղ բբրոնզին բնորոշ նյութեր հայտնաբերվել են նաև Կավաբլուր բազմաշերտ բնակավայրից [Սարդարյան, 2004, 278, 322, 323]: Վաղ բրոնզեդարյան շերտ բացահայտվել է նաև Ոսկեհատի Թափալարի բազմաշերտ բնակատեղիում [Ռ. Թորոսյան, Արարատյան դաշտի մնացորդների հետքերով, 1966 թ. օրագիր, էջ 15 բ., 28.05.1966 թ. օրագրային գրառում ԷՊԱԹ 1355, 1359]:

Ռ. Թորոսյանի հետազոտությունները ամբողջացնում են Ադաբլուրի ամրացված բնակավայրի Ս. Սարդարյանի և Գ. Արեշյանի [Սարդարյան, 2004, 186; Արեշյան, 1991, 10] պեղումների արդյունքները: Ընդ որում ըստ Գ. Արեշյանի, Ադաբլուրը հանդիսանում է Մոխրաբլուրի համապատասխան հորիզոնի սեգմենտավորման արդյունք [Արեշյան, 1991, 10]:

Վաղարշապատ քաղաքի տարածքից հայտնաբերված վաղ բրոնզին բնորոշ նյութերը վկայում են, որ տարածքը բավականաչափ խիտ բնակեցված էր և, ամենայն հավանականությամբ, մտնում էր Մոխրաբլուրի ագլոմերացիայի մեջ:

***Միջին բրոնզեդարյան համալիրների հավաստումը*** **(24/22-15-րդ. դդ.):** Թեղուտի ընդարձակ հուշարձանախմբում մասնագիտական գրականության մեջ առավել հաճախ հիշատակվում են Թեղուտի էնեոլիթյան բնակատեղին և բաց բիոֆիլտրի դամբարանադաշտը: Վերջինս հայտնաբերվել է շինարարական աշխատանքների ընթացքում և ուսումնասիրվել 1962-1965 թթ. Ռ. Թորոսյանի կողմից Հ. Մարտիրոսյանի

[1] Թեղուտի տարածքը արդեն պեղումների պահին հանդիսանում էր շինարարական հրապարակ Էջմիածնի բաց բիոֆիլտրի և Սասունցի Դավիթ թաղամասի կառուցապատման համար, ուստի արհեստական բլրի վերին շերտերը ավերված էին:

ղեկավարությամբ: Հ. Մարտիրոսյանն այս դամբարանադաշտը անվանում է *Էջմիածնի դամբարանադաշտ* և իր մենագրությունում զետեղում միայն միջին բրոնզի դամբարանների մասին տեղեկատվություն [Мартиросян 1964, 68-70]: Հետշենգավթյան դարաշրջանում, ամենայն հավանականությամբ, Թեղուտի բնակավայրը լքվում է, և տարածքը վերածվում է դամբարանադաշտի: Ընդ որում՝ Հ. Մարտիրոսյանի կողմից հիշատակվող Էջմիածնի դամբարանադաշտի (բաց բիոֆիլտրի) և Թեղուտի տարածքները փաստորեն համընկնում են: Սովորաբար այս դամբարանադաշտերը դիտարկվում են մեկ ընդհանուր համատեքստում: Է. Խանզադյանի՝ դեռևս 1960-ական թվականներին կազմած Էջմիածնի պատմազգագրական թանգարանի ցուցադրության պլանում հստակ զանազանում է բաց բիոֆիլտրի և Թեղուտի դամբարանները (Խանզադյան ա.տ. 18-20): Ռ. Թորոսյանի օրագրային գրառումների ուսումնասիրությունը թույլ է տալիս հստակ տեղորոշել Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրի տարածքում գտնվող դամբարանները պեղումների երկրորդ տեղամասում N 2, 3, 7 կացարանների հարևանությամբ: Միջին բրոնզին բնորոշ նյութեր հայտնաբերվել են նաև պատահական՝ շինարարական աշխատանքների ժամանակ [Է. Խանզադյան, ա.տ., 19, Թորոսյան, 1965, 14.03.1965, 11.04.1965 օրագրային գրառումներ, Թորոսյան, 1965 ա., 28, 11.04.1965 օրագրային գրառում] [ԷՊԱԹ 334-349, 585, 1170-1171, 1173-1175, 1177-1179]: Միջին բրոնզին բնորոշ գունազարդ խեցեղեն հայտնաբերվել է նաև Շրեշ բլուրին հարակից դամբարանադաշտից [Թորոսյանի 1976-1982, 27.02.1982 թ. օրագրային գրառում]:

Դամբարանային նյութերի հետ մեկտեղ տարածաշրջանում հավաստվել են նաև բնակատեղիներ: Այս համատեքստում հարկ է նշել Ռ. Թորոսյանի կողմից 1965 թ. հետազոտված Ոսկեհատի բնակավայրը: Այստեղ հետախուզական փոսորակը բացահայտեց հուշարձանի շերտագրությունը: Դեռևս Սարդարյանի կողմից ուսումնասիրված այս բնակավայրում Թորոսյանի հետազոտությունները թույլ տվեցին ճշտել հուշարձանի շերտագրությունը: Ստորին հորիզոնը պատկանում է էնեոլիթյան դարաշրջանին (Ք.ա. 5-4-րդ. հազ.), որին հաջորդում են վաղ (Ք.ա. 32-24-րդ. դդ.), միջին (Ք.ա. 20-16-րդ. դդ.) [Թորոսյան, 1966, 15-17, 31 ԷՊԱԹ 3265, 3272] և ուշ բրոնզեդարյան շերտերը (Ք. ա. 13-11-րդ. դդ.): Ամենայն հավանականությամբ միաշերտ բնակավայրեր էին Ծաղկունքից ոչ հեռու՝ Վաղարշապատի Վազգեն Սարգսյան (նախկ. Հոկտեմբեր) փողոցի [ԷՊԱԹ 3712-3713] և Ակնաշեն 2 բնակավայրերը [Թորոսյան, 1973], որտեղ հայտնաբերվել է միջին բրոնզի դարաշրջանին բնորոշ գունազարդ խեցեղեն: Առանձին գտածոներ հայտնի են նաև Մոխրաբլուրից [ԷՊԱԹ 2640]: Այս համատեքստում պետք է դիտարկել նաև Ադաբլուրի բնակավայրը, որտեղ գունազարդ կարմիրբերդյան խեցեղենով բնորոշվող միջին բրոնզի հորիզոնը ծածկում է վաղ բրոնզի շերտը [Արեշյան, 1991, 9]:

Միջին բրոնզին բնորոշ անոթ պատահականորեն գտնվել է Էջմիածին քաղաքի Սպանդարյան փողոցից [ԷՊԱԹ 5613]:

***Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի համալիրները*** **(Ք.ա. 13-9-րդ դդ.):** Ուշ բրոնզեդարյան նյութեր հայտնի են նաև Թեղուտի դամբարանադաշտից [ԷՊԱԹ 561, 563-567, 569. 571-572, 579], ինչպես նաև Էջմիածնի Վազգեն Ա և Մաշտոցի փողոցների խաչմերուկում: Այս խմբում պետք է դիտարկել նաև Ծաղկունքից գտնված ֆալիկ արձանը [ԷՊԱԹ 4415], ինչպես նաև Ոսկեհատից [Թորոսյան, 1966, 15 բ., 28.05.1966 թ. օրագրային գրառում] և Ծիածանից [ԷՊԱԹ 605-608] գտնված նյութերը: Վաղ երկաթի դարաշրջանին բնորոշ իրեր հայտնի են Ոսկեհատից [ԷՊԱԹ 1347, 1360], Թեղուտից [ԷՊԱԹ 570]: Տ. Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանի [Մեսրոպ վրդ., 98], Ա. Քալանթարի [Քալանթար, 2007, 329-340], այդ թվում նաև մեծ դամբարանների [Ս. Բարխուդարյան, 1935, 30 աղ. XI] պեղումները Ս. Հռիփսիմե և Զվարթնոց տաճարների մոտակայքում, Ս. Սարդարյանի պեղումները N 2 դպրոցի և Ս. Շողակաթ եկեղեցու մոտ [Սարդարյան, 1975, 55], ինչպես նաև հետագա պատահական գտածոները, վկայում են ներկայիս քաղաքի արևելյան հատվածում մ.թ.ա. II-I հազ. ընդարձակ հնավայրի (հավանաբար դամբարանադաշտի) առկայությունը: Այս մասին առաջին ենթադրությունը կատարել է դեռևս Խ. Սամուելյանը [Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Ե., 1931, էջ 30]:

Ամենայն հավանականությամբ ուսումնասիրվող տարածքը միջին բրոնզ-վաղ երկաթի դարաշրջաններում հանդիսանում էր Մեծամորի ագլոմերացիայի մի մաս:

Ռ. Թորոսյանի կողմից հետազոտված վաղ երկրագործական բնակավայրերի վերին հորիզոններում հավաստված են Ք.ա. 5-4-րդ. դդ. բնորոշ նյութերը Ոսկեհատից [ԷՊԱԹ 3266-3268, 3273]: IV-III դարերով է թվագրվում Թեղուտից հյուսիս գտնվող բնակատեղին [ԷՊԱԹ 444-446, 448-469], ինչպես նաև Ծաղկունքից հայտնաբերված առանձին նյութերը [ԷՊԱԹ 2111-2112]:

***Եզրակացություններ:*** Այսպիսով, Ռ. Թորոսյանի ուսումնասիրություններն Էջմիածնի տարածաշրջանի վաղ երկրագործական բնակավայրերում բացահայտում են, որ տարածաշրջանը խիտ բնակեցված էր ողջ բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանում ևս: Վաղ բրոնզի դարի նյութերը թեպետ համեմատաբար սակավ են, սակայն դրանց սփռվածությունը թույլ է տալիս ենթադրել տարածքի բավականաչափ խիտ բնակեցման մասին: Տվյալ ժամանակաշրջանում ուսումնասիրվող տարածքը գտնվում էր Մոխրաբլուրի ձգողականության տիրույթում:

Միջին բրոնզին բնորոշ նյութերը ներկայացված են ինչպես դամբարանային համալիրներում, այնպես էլ բնակատեղիներում: Միջին բրոնզի դարաշրջանի դամբարանային համալիրները բնորոշ են ողջ շրջափուլին, այն ժամանակ երբ բնակատեղիները վերստին բնակեցվում են սկսած Ք.ա. II հազ. սկզբից և բնորոշվում են գունազարդ խեցեղենով:

Տարածաշրջանի յուրացումը շարունակվում է նաև ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերում, երբ Էջմիածնի տարածաշրջանը մտնում էր մեծամորյան ագլոմերացիայի կազմում:




Նկար 1.




Նկար 2.



Նկար 3.

Նկար 4.

Նկար 5.

Նկար 6.

Նկար 7.

Նկար 8.



Նկար 9.

Նկար 10.

## Գրականության ցանկ

**Areshyan 1991** – Areshyan G., Adabluri peghumnery, khmb., Tirats'yan G., HH-um 1989-1990 t't'. dashtayin hnagitakan ashkhatank'neri ardyunk'nerin nvirvats gitakan nstashrjan, Yerevan, Hayastani GA hrat., 8-11: **(in Armenian)**

**Barkhudaryan 1935** – Barkhudaryan S., Khorhrdayin Hayastani nyut'akan kulturayi hushardzannery, Yerevan, Pethrat, 1935, 94 ej, 67 agh.: **(in Armenian)**

**Yesayan 1972** - Yesayan S., Zangezuri vagh hnagitakan hushardzannery, LHG, 1972, N 4, ej 64-73: **(in Armenian)**

**T'vorosyan 1965** - T'vorosyan RR., T'eghut, oragir N 2 (dzerragir): **(in Armenian)**

**T'vorosyan 1965 a.** – T'vorosyan RR., Ejmiatsin, «T'eghut», Tetr-oragir N 3 (dzerragir): **(in Armenian)**

**T'vorosyan 1966** - T'vorosyan RR., Araratyan dashti mnats'vordneri hetk'erov, 1966 t'. (dzerragir): **(in Armenian)**

**T'vorosyan 1973** - T'vorosyan RR., V. Khat'unarkh, 1973 t'. oragir (dzerragir): **(in Armenian)**

**T'vorosyan 1967** – T'vorosyan RR., T'eghuti peghumneri 1967 t'. oragir (dzerragir): **(in Armenian)**

**T'vorosyan 1976-1982** - Rrafik Manuki T'vorosyani oragir (dzerragir): **(in Armenian)**

**T'vorosyan 1976** – T'vorosyan RR., T'eghuti vagh yerkragortsakan bnakateghin, Yerevan, HSSH GA hrat., 1976, 142 ej: **(in Armenian)**

**T'vorosyan yev aylk' 2002** - T'vorosyan RR., Khnkikyan O., Petrosyan L., Hin Shirakavan, Ye., HH GAA «Gitut'yun» hrat., 2002, 158 ej, 83 agh: **(in Armenian)**

**Khanzadyan 1967** – Khanzadyan E., Haykakan lerrnashkharhi mshakuyt'y m.t'.a. III hazaramyakum, Yerevan, HSSH GA hrat., 1967, 117 ej, 28 agh.: **(in Armenian)**

**Khanzadyan a.t.** – Khanzadyan E., Ejmiatsni yerkragitakan t'angarani hin shrjani ts'uts'adrut'yan plan (dzerragir): **(in Armenian)**

**Mesrop vrd. 1907** - Mesrop vrd. (Ter-Movsisean), Ejmiatsin yev Hayots' hnagoyn yekeghets'inery, prak A, Azgagrakan Handes XV, T'iflis, 1907, 86-127: **(in Armenian)**

**Samuyelyan 1931** – Samuyelyan KH., Hin Hayastani kulturan, h. 1, Yerevan, Pethrat, 1931, 381 ej, 38 agh.: **(in Armenian)**

**Sardaryan 1975** - Sardaryan S., Hin Vagharshapati teghadrut'yuny yst hnagitakan yev matenagrakan tvyalneri, LHG, 1975 N 7, ej 52-69. **(in Armenian)**

**Sardaryan 2004** – Sardaryan S., Hayastany k'aghak'akrt'ut'yan orran, Yerevan, YePH hrat., 2004, 498 ej: **(in Armenian)**

**K'alant'ar 2007** - K'alant'ar A. Hayastany, k'are darits' mijnadar, Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2007: **(in Armenian)**

**Kushanareva, Markovin 1994** – Kushanareva K., Markovin V. (red.), Rannyaya i srednyaya bronza Kavkaza,ser. Arkheologiya, Moskva, "Nauka", 1994, 382 s. **(in Russian)**

**Martirosyan 1964** – Martirosyan A., Armeniya v epokhu bronzy i rannego zheleza, Yerevan, izd-vo AN Arm.SSR, 1964, 312 s., 29 tab. **(in Russian)**